կամ Պոռանց կղզին, ուր տեղի ոչխարներուն միսը այնպէս լեղի էր կ'ըսէ որ ուտելը անկարելի էր. ան ատեն իրենց ճամբորդութիւնը դէպ 'ի հարաւ շարունակելով տասուերկու օրէն ետքը կղզի մը գտան՝ որուն բնակիչքը երկայնահասակ ու կարմրագոյն էին ։ Իրեք օր կղզւոյն դիմաց կենալէն վերջը՝ իրենց արաբացի դեսպան մը եկաւ կղզւոյն թագաւորէն ու իրենց գալուն պատճառը հարցուց. անոնք մտքերնին բացատրելէն վերջը պատասխան առին՝ որ այս կղզեցիք ալ դէպ 'ի Ովկիանոս ճանապարհորդներ ղրկեր էին, բայց քիչ մը առաջ երթալէն վերջը սաստիկ խաւարի մը հանդիպելով հարկադրեր ետ դարձեր էին։ Լիսպոնացի ճամբորդները այս բաները լսելով յոյսերնին կորեցին նոր երկիր գտնելէն ու շուտ մը ետ դարձան ։ Այս դիպուածիս յիշատակը պահելու համար, կ'ըսէ Իսպ-Լաւ-Ս արտին Լիսպոնայի մէկ արուարձանը Ալմակռուրիմ կամ Պոն-տուխօտ ըսուեցաւ ։ Այս դիպուածս 1147ին հանդիպած է, և անկէ վերջը քանի մը անգամ այսպիսի ճամբորդութիւններ կը յիշուին. որոնց մէջ յիշատակաց արժանի է երկու Ճենովացի նաւապետաց ճամբորդութիւնը՝ որոնք 1291ին ելան ճամբայ բայց ետ չդարձան, և անկարելի ալ եղաւ անոնց ինչ ըլլալը իմանալ ։

Քանի մը աշխարհագիրք և մանաւանդ Տէ Կինել այս պատմութեանս մէջ յիշուած Կարթէր Մօրթէնէ Ամերիկացիները կը կարծեն, բայց շատերն ալ Նորմաններն են կ'ըսեն՝ զորոնք Արաբացիք Կորդը կ'անուանէին ։ Կղզւոյն մէջը արաբացի դեսպան գտնուելէն կը գուշակուի որ Ափրիկէի մօտ կղզի մը եղած պիտի ըլլայ, և թէ այս կղզին Քանարեան կղզիներէն ասդին և կամ նոյն կղզիներէն մէկը ըլլայ ։

Հ. Գ. Մ.

---

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔ

Մնուրարի 1852 ամին :

Անցեալ տարւոյն վերջը գրինք քանի մը երկարակեաց մարդկանց տարիքը, որոնք որ աշխարհքիս անհուն դաշտին մէջ՝ իբրև թէ մահուան ամենածախ ու անվրիպելի մանգաղէն ազատած, տեսեր էին իրենցմէ շատ ետև բուսած ու աճած ծաղկները անոր սուր գերանդւոյն բերանն իյնալը, որոնցմէ շատերն ալ թերևս հազիւ ծլեր էին, և թէ իրենց և թէ ուրիշներուն շատ գարուններու ծաղկներ ու ազուններու պտուղներ կը խոստանային. բայց սակայն մահուան հունձքը առաւ զանոնք խուրձ մը կապեց. իսկ իրենք հինցած ծառերու չորցած կոճերու պէս իրենց տեղը մնացին ։ Ասոնց վիճակը որչափ որ շատերու նախանձելի երևնայ, այնչափ ալ սովորական միջահասակ կեանքը քաղցր պիտի գայ, տեսնելով թէ որչափ մարդիկ ան իրենց սակաւօրեայ կենաց մէջն ալ իրենց մշտնջենաւոր և ժամանակաւոր անմահութիւնը թէ հոս և թէ հոն ապահովցուցեր են. և թէ երկար կեանքը խիստ քիչ մարդկանց տրուեր է, որ որչափ ալ երկարի՝ դարձեալ ետքը ետքը վերջ մը պիտի ունենայ, և մեռնելու օրէնքը ամենուն համար ալ հաւասարապէս սահմանուած է ։

Մենք հիմա գնենք հոս ան անձինքը որ իրենց պատուովը կամ գիտութեամբը անուանի եղած էին, և անցեալ տարւոյն մէջ իրենց մահկանացու ասպարէզը լմնցուցին ։

Մեռեալք և Նահատակեալք. Լէոփոլտ մեծ դուքս Պատենի. Մարիամ Սոփիա հէս—Քասէլլի որ էր Տանիմարքայի թագուհի այրի մնացած Փրեդերիկոս Զին. Մաքսիմիլիանոս դուքս Լևթէնպէրկի Ռուսաց կայսեր փեսայն. Պաւղոս իշխան Վիւրթէնպէրկի՝ հիմակուան թագաւորին եղբայրը. Ռուէտի թագաւորին երկրորդ որդին Ոսփլանտի դուքսը. Օմալը դքս-

սին երկրորդ որդին Կիզի դուքսը․ Մա-տակասքարի Թագուհին Ռանավալայ Մաձիքա․ Հենրիկոս Բ իշխան Ռոյս Շլայց-Քէսթրիցի․ Սաքս-Ալթէն-պուրկի դուքս Եդուարդ Կարոլոս․ Սաքս-Վէյմար-Այզէնախի դքսուհին Իդա։

Ծիրանաւորք․ Օրիոլի, Պեռնեթթի, Քասթրաքանէ տէյլի Անթելմինէլլի։

Իշխանաւորք․ Քոլլորէտօ-Մանսֆէլտ իշխան Ֆրանկիսկոս․ — Պիրոն-Վարթէնպերկի դուքս Պետրոս Կուստաւոս Հերման․ Յարթօրիսքի իշխանուհի Կլեմանտին-Մարիամ-Թերէզա․ Լէվէնշթայն-Վերթհէյմ իշխան Կարոլոս-Ֆրեդերիկոս․ Սալուցցոյ իշխան Փիլիպպոս․ Շվարցընպերկ իշխան Ֆելիքս Լուդովիկոս Յհ․ Ֆրեդերիկոս՝ պաշտօնակալ նախագահ և պաշտօնեայ արտաքին գործոց Աւստրիոյ կայսերութեան։

Քաղաքագէտք․ Տոն Կարոլոս Ալվէար պաշտօնեայ Արգենթին հասարակապետութեան ՚ի Նոր Եորք․ կոմն Ալէկրի պաշտօնեայ Աւստրիոյ ՚ի Աթենայ․ կոմն Ափփոնի երբեմն դեսպան Աւստրիոյ ՚ի Փարիզ․ կոմն Քոլոմպի պաշտօնեայ Սպանիոյ ՚ի Հռոմ․ կոմն Մաւրիտիոս Տիէթրիխշթէյն վաղեմի պաշտօնեայ Աւստրիոյ ՚ի Լոնտրա․ Կարոլոս Կեաքէն պաշտօնեայ Ամպուրկ քաղաքի ՚ի Վիեննա․ պարոն Քրուսնէրի պաշտօնեայ Ռուսիոյ ՚ի Սթոքոլմ․ պարոն տ՚Օսոն քաղաքագէտ Շուէտաց․ Միլվէրսթէֆլ վաղեմի պաշտօնեայ Շուէտաց ՚ի Վիեննա․ դուքս Վիլահերմոզա նախկին դեսպան Սպանիոյ ՚ի Փարիզ․ պարոն Վոշր երբեմն պաշտօնեայ Վիրթեմպերկի ՚ի Հոլանտա․ կոմն Նուտի երբեմն պաշտօնեայ Սպանիոյ ՚ի Տանիմարքա․ Շտէր երբեմն նախագահ նուիրակաց ՚ի Վիրթեմպերկ․ պարոն Կէրստորֆ նախկին պաշտօնակալ Սաքս—Վէյմարի։

Զինուորականք․ Յանգլիայ․ մեծ սպարապետ դուքս Ուէլլինկթըն․ դուքս Հէմիլթըն լորտ սկովտացի․ Լորտ Փէնմըր․ կոմն Շրիւսպըրի։ — Ի Պելճիա․ Տիւմոն Տիւմորթիէ նախագահ ծերակուտին․ զօրավարք Լավիան և Միյինէ։ — Ի Սպանիա․ զօրապետն Քարդանոս դուքս Պայլէնի․ կոմն Ֆլորիաս երբեմն պաշտօնակալ։ — Ի Փորթուկալ․ զօրավարն կոմն Տաս Անդաս․ կոմն Խոյալ երբեմն պաշտօնակալ։ — Ի Ռուսիա․ պաշտօնակալք Վոլքոնսքի և կոմն Վրոնչէնքոյ։ — Ի Միացեալ Նահանգս․ համարակալքն Հենրիկոս Քլէյ և Դանիէլ Ուէպսթըր։ — Ի Գաղղիա․ ստորապետք Լըքօկլէման, Սարման և Ժերար։ Ի ծերակուտէն Ֆուքիէ, տ՚Ալպուէլ և Տէփօրդ։ Ի նուիրակաց տ՚Արժան, Փարմանթիէ և Տիւվիլլիէ։

Աստուածականք․ Ի Գաղղիա․ քահանան Աքիւլէս Ախշար․ հանքաբանն Ֆլէօրիօ տը Պէլվիւ․ բնալոյծք Ուէլթըր, Լոպէլման․ բժիշկք Ռէքամիէ, Տիւպրէօյ, Մէվէյլ Պարիս․ երկրագործ Կամիլլոս Պօվէ․ բանասէրք Վալքէնէր և Եւգինէոս Պիւրնուֆ։ — Ի Գերմանիա․ երկրաչափն Էյզէնշթէյն․ աստղաբաշխն Կրոյթցայգէն․ մետէորաբանն Շթիֆֆէլ․ Նկարաբանն Հիւմնկէր․ թուաբանն պարոն Լանկստորֆ։ — Յանգլիա անտեսաբանն Փորթըր։

Բանասէրք․ Ի Գաղղիա․ կոմն Քսավերիոս տը Մեսթեր, Նափոլէոն Լանտէ, Բենիամին Լարոշ, Օզանամ և այլն և այլն։ — Յանգլիա․ երեւելի քերթողն Թոմաս Մուր։ — Ի Գերմանիա, Թատրերգակն Ռաուբախ, Կուստաւ Կէօրրէս։ — Ի Ռուսիա վիպասանք Կոկոլ, Ժուկովսքին և Զաքոսքին։

Գեղարուեստագէտք․ Ի Գաղղիա․ անդրիագործքն Պրատիէ, Սամէյ և կոմն տ՚Օրսէյ․ նկարիչք Ֆելիքս Քոթրոյ, Թոնի Ժոհաննօ, Հենրիկոս Տէքէն․ ճարտարապետն Հիւվէ։ — Յանգլիա ճարտարապետն Փըճին։

### Մեռելագիր Իտալիոյ

Անցեալ տարուան մէջ Իտալիա ալ շատ ծանրակշիռ կորուստներ ունեցաւ ուսումնականաց և բանաստեղծաց այլևայլ դասերէն, որոնց ցուցակը ամոց կարգաւ նշանակենք ։

Փետրուարի մէջ մեռաւ. Յհ. Մորթի միլանցի քերթողն. Լուդովիկոս Կուալթերիոյ մարգիզն. Նիքոլոյ Փուչչինի մարդասէր ու բանասէր անձը ։

Մարտի մէջ, Տրովէթթի ասպետը որ Գաղղիոյ հիւպատոս էր Եգիպտոս. անուանի երկրագործն Մատթէոս Պոնաֆուս ։

Ապրիլի մէջ, պոլոնիացի քերթողն Յհ. Մայփեթթի կոմսը, Սարտենիոյ թագաւորութեան նուիրակաց նախագահ Փինէլլի ասպետը ։

Մայիսի մէջ, Միքայէլ Բարաքօղա նափոլիցի զօրավարը. Անիբաղ Սալուցցոյ

Յունիսի մէջ, վենետիկցի բանասէրն Բեռնարդոս Կոնֆալթի ։

Յուլիսի մէջ, Սալվաթոր Բամմարանոյ անուանի երգահանը նափոլիցի, և թոսքանացի ճարտարապետը Զինի ։

Օգոստոսի մէջ, Պոմպէոս Լիթթա միլանցի կոմսը, նմանապէս Պետրոս Պորսիէրի. Փոսսանիյի եպիսկոպոսը Փանթինի որ տէրութեան ծերակուտէն էր ։

Սեպտեմբերի մէջ, Կարոլինա Փօէրինոյ պարոնուհին 'ի Նափոլի, անուանի բնաբանն Պելլանի միլանցին. և հռչակաւոր ճարտասան քարոզիչը Տէֆէնտի ։

Հոկտեմբերի մէջ, տնտեսաբանն Բանեացցի և բանասէրն Վինչենտիոս Ճիոպերթի ։

Նոյեմբերի մէջ, համբաւաւոր բանասէրն ու քարոզիչ Յովսէփ Պարպիէրի ։

Դեկտեմբերի մէջ, Պերկամոյի եպիսկոպոսն Մորլաքքի և այլն ։

---

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

*Դաս ԺԱ. Բնալուծական անուանակոչութեան վրայ :*

ՊԱՐԶ ՄԱՐՄԻՆՔ. Պարզ մարմնոց անուանակոչութիւնը եւրոպական լեզուաց մէջ ամենադիւրին է, և կըրնանք ըսել թէ կանոնի մը տակ չիյնար. ուստի ամէն տեսակ պարզ ու համառօտ բառ կրնայ ասոնց անուն սեպուիլ. ինչպէս որ Թենար անուանի բնալուծը կ'ըսէ. "Անշան անուններ կրնան տրուիլ պարզ մարմնոց. և աղէկն անոնք են որ կարճ են, և անոնցմով ուրիշ անուններ (այսինքն ածանցներ ու բարդութիւններ) դիւրաւ կրնան ձևանալ։ Իսկ բաղկացեալ մարմնոց անունները՝ պէտք է որ անանկ յօրինուած ըլլան՝ որ իրենց բաղկայուց տարրերքն ցուցընեն„ ։

Անոր համար եւրոպական լեզուաց մէջ պարզ մարմնոց անուններուն — Ա. փոքրագոյն մասը բուն իրենց լեզուովն է. զոր օրինակ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ և այլն. այսինքն անոնք որ յառաջ քան զբնալուծութիւն ճանչցուած մարմիններ են. և ասոնք ամէն ազգ իր լեզուովը կ'ըսէ. զոր օրինակ գղ. Cuivre, իսկ իտ. Rame. իտ. և գղ. Argento և Oro. իսկ անգղ. Silver և Gold և այլն։ Իսկ մնացած պարզ մարմնոց անուններուն մեծագոյն մասը առնուած են — Բ. յունարէնէ. 1° ոմանք դիցաբանական կամ յատուկ անուններէ. զոր օրինակ Cadmium, Palladium, Tantale, Titane, Magnésium. 2° ոմանք նշանակութիւն չունեցող բառերէ, կամ մարմնոյն մէկ յատկութիւնը ցուցընող բառերէ. զոր օրինակ Antimonium (Ծարիր) հակառակ մոյ, Arsénic (Օառիկ) այրական, Brome գարշահոտ, Phthore կամ Fluor ապականիչ, Phosphore լուսաբեր. Barium ծանր, Chlore չէկ, շըրոս, Iode մանուշակագոյն Iridium ծիածան, Lithium քար, Molybdène կապար, Osmium հոտ, Rho-